Հաստատում եմ՝

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր

պաշտոնակատար դոցենտ Լիլիթ Մկրտչյան

ԿԱՐԾԻՔ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2026 թ. փետրվարի 16-ի նիստի

ԱՄԲԻՈՆԻ ՆԻՍՏԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԷԻՆ. Ամբիոնի վարիչ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, ամբիոնի դոցենտներ պատմական գիտությունների թեկնածուներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը, Մ. Մարտիրոսյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Հ. Պապոյանը:

ԼՍԵՑԻՆ. Աշխեն Անուշավանի Հովսեփյանի «Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 1991-2018 թթ.» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության քննարկումը (գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ□ Հ. Մելքոնյան):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Ստեփանյանը, պատմական գիտությունների թեկնածուներ, դոցենտներ Ն. Մինասյանը, Ա. Մարտիրոսյանը, Հ. Գրիգորյանը:

Քննարկման մասնակիցները համակարծիք էին, որ Աշխեն Հովսեփյանի «Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 1991-2018 թթ.» ատենախոսության թեման արդիական է, ունի գիտական ու գործնական կարևոր նշանակություն:

«Սառը պատերազմի» ավարտից մինչև 2018 թ. ընկած ժամանակահատվածում Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը ենթարկվել է տարատեսակ կերպափոխումների: Այս առումով բացառություն չէ նաև

աշխարհաքաղաքական բախումների կիզակետում գտնվող Հարավային Կովկասում Հնդկաստանի վարած քաղաքականությունը:

Որպես խոշոր և զարգացող տնտեսություն՝ Հնդկաստանն ակտիվորեն մասնակցում է միջազգային օրակարգերի ձևավորմանը՝ հանդես գալով բազմակողմ զարգացման օգտին և ձգտելով պատշաճ տեղ զբաղեցնել միջազգային հարաբերությունների համակարգում: Հարավային Կովկասը Հնդկաստանի համար տարբեր նախագծերի իրականացման հեռանկարային հարթակ է և բազմաֆունկցիոնալ հանգույց: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ Հնդկաստանը ձեռնամուխ եղավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերությունների զարգացմանը, որոնցից յուրաքանչյուրն օժտված է իր առանձնահատկություններով: Մեր օրերում Հնդկաստանի և Հարավային Կովկասի փոխհարաբերությունները թևակոխում են նոր մակարդակ, որոնց խորությունը հասկանալու համար կարևորվում է 1991-2018 թթ. տարածաշրջանի նկատմամբ Հնդկաստանի քաղաքականության համապարփակ ուսումնասիրությունը:

Վերոնշյալի համատեքստում ատենախոսը կարողացել է պատշաճ կերպով ներկայացնել ու հիմնավորել թեկնածուական ատենախոսության արդիականությունը: Կատարված աշխատանքը կարևոր է նախևառաջ հայ-հնդկական հարաբերությունների ուսումնասիրության, ինչպես նաև հարավկովկասյան տարածաշրջանում Հնդկաստանի քաղաքականության սկզբունքներն ու գերակայությունները վերհանելու տեսանկյունից:

Ատենախոսը հիմնավորել է նաև հետազոտության գիտական նորույթը: Հատկանշական է այն մոտեցումը, որ սույն ուսումնասիրությունը Հայաստանում թեմայի հետազոտության առաջին փորձն է նոր լույսի ներքո: Բացի այդ, աշխատանքում հարավկովկասյան առանձին պետությունների հետ փոխհարաբերությունների քննությանը զուգահեռ, հեղինակը Հնդկաստան-Հարավային Կովկաս հարաբերությունները դիտարկում է մեկ միասնական միջավայրում:

Հեղինակը հստակորեն ձևակերպել է հետազոտության նպատակն ու խնդիրները՝ իրավացիորեն մատնանշելով Հնդկաստանի և Հարավային Կովկասի պետությունների միջև քաղաքական, տնտեսական և ռազմավարական

նշանակություն ունեցող ուղղությունների բացահայտումը: Ատենախոսն օգտագործել է հարուստ գրականություն և աղբյուրագիտական հենք՝ մի քանի տասնյակ փաստաթղթեր, հայալեզու և օտարալեզու գիտական աշխատություններ, մամուլի հրապարակումներ, համացանցային նյութեր և հարցազրույցներ:

Պետք է շեշտել նաև ատենախոսության կիրառական նշանակությունը: Այն օգտակար հետազոտություն է ոչ միայն պատմաբանների և քաղաքագետների, այլև ՀՀ արտաքին քաղաքական գերատեսչության համար: Ատենախոսությունը կարող է կիրառվել նաև ՀՀ բուհերի համապատասխան մասնագիտությունների ուսումնական ծրագրերում:

Ընդհանուր առմամբ, աշխատանքը կարևոր ներդրում է Հարավային Կովկասում Հնդկաստանի վարած քաղաքականության առանձնահատկությունները իմաստավորելու գործում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հեղինակը համակարգված ներկայացրել է թեմայի ուսումնասիրման արդիականությունը, կարևորությունը, առաջադրված խնդիրները, նպատակները, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին. ընդհանուր ակնարկ», նախ ներկայացված են Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները հետսառըպատերազմյան տարիներին: Հեղինակը փորձել է նորովի մեկնաբանել դրանք: Այնուհետև առանձին ենթագլխով քննարկվել է Հնդկաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների զարգացումն աշխարհաքաղաքական գլխավոր դերակատարների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ: Հենց այս համատեքստում էլ դիտարկվել է Հարավային Կովկասի տեղն ու դերը Հնդկաստանի արտաքին քաղաքական ուղեծրում:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Հնդկաստան-Հայաստան հարաբերությունները 1991-2018 թթ.», նախ անդրադարձ է կատարվում հայ-հնդկական պատմական առնչություններին: Այնուհետև ատենախոսը ներկայացնում

է հայ-հնդկական միջպետական փոխհարաբերությունների զարգացման դինամիկան՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից մինչև դրանց խորացումը քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական և կրթամշակութային ուղղություններով: Հեղինակը հանդես է գալիս նաև հայ-հնդկական համագործակցության ինստիտուցիոնալ ամրապնդմանն ուղղված օրակարգային առաջարկություններով:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Հնդկաստան-Վրաստան հարաբերությունները 1991-2018 թթ.», նախ ներկայացվում են Հնդկաստան-Վրաստան քաղաքական և մշակութային հարաբերությունները, ապա՝ տնտեսական համագործակցությունը: Առանձնահատուկ կարևորվում է Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքը Հնդկաստանի համար, մասնավորապես՝ սևծովյան ուղղությամբ դեպի Եվրոպա ելք ունենալու տեսանկյունից:

Չորրորդ գլխում՝ «Հնդկաստան-Ադրբեջան հարաբերությունները 1991-2018 թթ.», հեղինակն անդրադառնում է երկու երկրների միջև քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններին՝ առանձնապես շեշտադրելով էներգետիկ և առևտրային ուղղությունները: Ատենախոսն առանձին քննարկում է նաև Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցության վերաբերյալ Հնդկաստանի ունեցած դիրքորոշումը:

Եզրակացության բաժնում ամփոփված են ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը:

Նիստի մասնակիցները, դրական գնահատելով ատենախոսի կատարած ծավալուն և պատասխանատու աշխատանքը, միաժամանակ հնչեցրին մի քանի դիտողություններ և նկատառումներ, որոնց հաշվի առնելը կարող է օգտակար լինել աշխատանքի հետագա լրամշակման համար.

1. Աշխատանքն էապես կշահեր, հեղինակը ներածության մեջ տեսական վերլուծության ենթարկեր հետազոտության աղբյուրագիտական բազան. զեկույցներ, պաշտոնական տեղեկատվություն, համաձայնագրեր և հարցազրույցներ:

2. Հետազոտության իրականացման տեսանկյունից անհրաժեշտ էր ընտրված մեթոդաբանության ներկայացումը և հիմնավորումը:
3. Հնդկաստանի արտաքին քաղաքական ռազմավարությունում տեղի է ունեցել որոշակի փոփոխություն: Եթե նախկինում իրականացվում էր միասնական քաղաքականություն տարածաշրջանի նկատմամբ, ապա ներկայումս ընդգծվում է երկկողմ հարաբերությունների զարգացման կարևորությունը: Այս տեսանկյունից շահեկան կարող էր լինել, եթե հեղինակն առաջին գլխում առանձին ենթահարցով անդրադառնար Հնդկաստանի արտաքին քաղաքական դոկտրիններին ու ռազմավարություններին՝ մասնավորապես Հարավային Կովկասի համատեքստում:
4. Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Հնդկաստանի հարաբերությունները ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ հետսառըպատերազմյան շրջանում», ներկայացված մոտեցումը որոշակիորեն ընդհանրական է: Խնդիրն առավել բովանդակային կլիներ, եթե հեղինակը վերհաներ Հնդկաստանի և հիշյալ երեք պետությունների շահերի ու արտաքին քաղաքականության հակադրություններն ու համընկնումները Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացներում: Այս համատեքստում թերևս կարիք կար ավելի մանրամասն վերլուծել Հնդկաստանի և Չինաստանի քաղաքականությունը «Հյուսիս-Հարավ» և «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ենթակառուցվածքային նախագծերի առնչությամբ:
5. Հարկավոր է գնահատել Հայաստան-Հնդկաստան ռազմաքաղաքական համագործակցության ներուժն ու հնարավորությունները (հաշվի առնելով նաև տարածաշրջանային այլ դերակատարների հետ հարաբերությունների դինամիկան): Այս առումով ատենախոսը կարող էր առավել մեծ տեղ հատկացնել ռազմական համագործակցությանը՝ ցույց տալով դրա կարևորությունը երկու պետությունների համար:
6. Ատենախոսությունն ավելի կշահեր, եթե հեղինակը որոշակի չափելի ցուցանիշների ձևակերպմամբ համեմատություններ անցկացներ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում Հնդկաստանի առևտրատնտեսական գործունեության, «փափուկ ուժի» և քաղաքական

ներկայության վերաբերյալ: Օրինակ՝ կարելի էր առանձին ներկայացնել և համեմատել Հարավկովկասյան պետությունների հետ Հնդկաստանի ունեցած առևտրատնտեսական ցուցանիշները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը, քննարկելով Աշխեն Անուշավանի Հովսեփյանի «Հնդկաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները Հարավային Կովկասում 1991-2018 թթ.» թեմայով թեկնածուական ատենախոսությունը, գտնում է, որ այն համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ամբիոնը երաշխավորում է ատենախոսության հրապարակային պաշտպանությունը ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում, իսկ ատենախոսն արժանի է հայցվող պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր՝ Խ. Ստեփանյան

Խ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
ՀՊՄՀ գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ. Թադևոսյան

16.02.2026